

Պէտք է հասկանանք վերջապէս, որ քաղաքակրթութեան հասարակութեան ամենաբարձրագոյն նշանաբանն է՝ հ ա մ Ի ու շ ի ու թ ի լ ը ն երբ մարդը հոգում է ուրիշների մասին, նա զրանով հոգում է և իր մասին, իսկ երբ անտարբեր է դէպի ուրիշները, նա զրանով վերջ է վերջոյ փնտրում և և ինքնին:

Ճշմարիտ բարեգործութիւնը հիմնված է խելացի եւսականութեան վրայ, իսկ անտարբեր եւսականութիւնը՝ ամենից շատ փնտրում է նոյն իսկ դէպի ուրիշները, դէպի մեծամասնութիւնը անտարբեր, անփոյթ կերպով վերաբերող մարդկանց:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ

Դեկտեմբերի 1-ին

Գործով դառնալով Ալեքսանդրոպոլի գաւառում և չլքելով այդ գաւառի Շորապետի մասին մօտ 20—25 հիւղերը, ես չը մոռացայ ուշադրութիւն դարձնել և թղթակցին կարեւոր հանգամանքներ վրայ, և ի միջի այլոց այդ հիւղերից ոչ մէկում չը հանդիպեցի հայոց ծխական դպրոցներին, չը նայելով որ կան բաւական մեծ-մեծ հիւղեր, որոնք ունեն 200—400 տուն հայ բնակիչներ: Օրինակ, Փորթ-Վարաքիսան ունի 400-ից աւելի հայ-լուսաւորչական և կաթողիկէ բնակիչներ, Գաւառ-Ղշաղը ունի մօտ 250 տուն լուսաւորչական բնակիչ և այլն: Մի քանի հիւղեր առաջ ունեցել էին ծխական դպրոցներ, բայց այժմ յորդորողներ չունենալու պատճառով այլ ևս չեն բացվում: Յիշեմ 20—25 հիւղերից միայն մէկում, այն է Բայանդուրում, կայ մէկ միդասեան տարրական դպրական ուսումնարան. այնտեղ հայոց լեզուն չէ աւանդում, ուսուցիչ չունենալու պատճառով, իսկ հայոց կրօնն էլ յանձնված է այդ հիւղի ծխական քահանային:

Դէպքից օգտվելով, ես այցելեցի Անի քաղաքի աւերակները: Ցաւելով պէտք է ասեմ, որ նշաւաւոր մայրաքաղաքի վերջին յիշատակներն էլ կործանվելու դրութեան մէջ են գտնվում. 1.001 եկեղեցիներէ հազիւ 2-ը փոքր ի շատէ պահված են, այն է Վաղարշ և Նշախ: Եկեղեցիները, մեծ-նոցած մի երկունքից մէկ կամ երկու պատերն են միայն պահված, որոնցից գուցէ մի քանի տարիներից յետոյ վերջին յիշատակներն անգամ չը մնան: Ինչպէս պատմում են 15—20 տարի սրանից առաջ Անին տեսնողները, այն ժամանակ թէ էլ էլի քարուքանդ եղած, բայց լաւ երևում էին տներն և եկեղեցիներն հնաքերը, փողոցներն և շատ եկեղեցիներ ամբողջ էին մնացած և այլն, իսկ այժմ, մի քանի երկրաշարժների և աւերակների անհոգ թողնելու շնորհով, Անին ներկայացնում է իրանից մի ամայի դաշտ, ծածկված աւերակների բարձրաւանդակներով, որոնց միջից երևում են եկեղեցիների բեկորները, կաթողիկոսարանից մնացած մի սենեակ, երեք պատերով, կողքի աշտարակով և թաղաւորական պալատից մնացած մի սենեակ, էլի քանդված պատերով: Ինչպէս լսեցի, 15 տարի սրանից առաջ, Ղարսից շատ ամբողջ Անի գաղով և քանդելով եկեղեցիները, քարերը տարել են Ղարս իրանից համար տներ շինելու: Հիմա թէ էլ Անին

նում է երկնքի կապուտակի մէջ: Շիկացած արեւը սողալով հորիզոնի վրայ միջով կրակ է տարածում իր շուրջը: Մերի ապաւանդներ գտնվելով նրա տակ, կորցրել են իրանց վայրենի դէմքերը, նրանք ինձ չեն թուում զօրաւոր: Նրանք զուգիւր են ոսկեհիւս զգեստի մէջ, մեղմացել ու քնքշացել են: Նրանցից մէկը, որ գերազանց է իր վսեմութեամբ ու վայրենութեամբ՝ անշատված իր դրացիներից, հսկայական հասակով բազմած է անտառապատ բարձրաւանդակի վրայ: Նրա մինչև ամպեր հասած գագաթը նման չէ սովորական ապաւանդներին: Նրա տարօրինակ գագաթը նրման է հինաւորաց աւերակների մնացորդներին: Արեւ ուղղակի դրա վրայ է տարածել իր կիզիչ ճառագայթները, ուրեմն և արեւելում է ինձ որոշելու խորհրդաւոր գագաթը: Ամբողջ ապաւանդը իր յաղթանակով մարմնավոր այս րօպէին ներկայացնում է թափանցիկ մի սիւրճետ և աւելի ու չինչ: Հասած արտերը, կանաչ բլուրները, որոնք միշտ բնութեան զարդ են համարվում, այժմ չեն

մնացած մի քանի եկեղեցիներ յիշատակները պահպանելու համար էջմիածնի կողմից նշանակված է մի վարդապետ, Ներսէս Տիգրանեանց աւանդով, բայց հայր-ուրբը, ինչպէս և նկատեցի, շատ էլ հոգ չէ տանում եկեղեցիների պահպանութեան և մաքրութեան վրայ: Եթէ այդպէս շարունակվի, չի անցնի և մի տասնեակ տարի և մենք բոլորովին կը զրկվենք: Անի քաղաքի ամենափերջին յիշատակներէ:

Ն. Մ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐԻ

Լսում ենք, որ Վ. Կաթողիկոսի կոնգալով Ներսիսեան դպրոցի տեսուչ Սարգիս քահանայ Բէշնաղարեան հրաժարեցրած է իր պաշտօնից:

ՆԵՐՔԻՆ-ԱՅՏԱՅԻՑ մեզ գրում են դեկտեմբերի 11-ից հետեւեալը: «Այսօր ահա տան օր է, որ այստեղ ձիւնը անընդհատ գալիս էր և ճանապարհի երթեկները խանգարված էր: Զիւնի գալը այժմ դադարած է և սակայն գետնի վրայ մնում է արշինաչափ խորութեամբ: Զիւնի գալու միջոցին երկու ճանապարհորդը հիւղացիք խեղդվեցան իրանց ձիւ հետ: Այս տեսակ ձիւն 1877 թից յետոյ եղած չէ: Այժմ այստեղ սաստիկ ցուրտ է անում»:

Պ. Բարսեղ Քամալեան խնդրում է մեզ տպել հետեւեալը: «Իմ հրատարակած «Վանանէ Մանի թաղում» վերնագրով բրօշուրը, որից դուրսացած արդիւնքը, ծախքը հանած, յատկացրել եմ Մանիի դժբախտ ընտանիքի օգտին, այս օրերս ծախվել է արդէն 40 բուրլու դոմարի, այնպէս որ ծածկել է իր ծախքը: Այս օրվանից սկսած որքան էլ վաճառվին այդ բրօշուրի օրինակները, նրանցից ստացած փողը կը յատկացնեմ Մանիի ընտանիքին, և երբ չօչափելի գումար կը դուրսայ, կը յանձնեմ ուր հարկն է ձեռք խմբագրութեան միջոցով: Պատրաստ եմ, հարկ եղած ժամանակ, հաշիւ տալ 1900 օրինակի քանակութեամբ տպված բրօշուրի վրա եղած մանրամասն ծախսի մասին»:

Հին-ՆԱՍԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են «Մինչև դեկտեմբերի սկիզբները եղանակները մեղմանում աշնանային էին: Այնուհետև, դեկտեմբերի 4-ին, սկսեց ձիւն գալ: Մինչև այդ ժամանակ հիւղացիները զբաղված էին վարում, ցանում էին տեսակ տեսակ հացահատիկներ և հաւաքում էին բամբակ: Այդ վերջին բերքից հիւղացին սպասում էր մեծ օգուտներ, որպէս զի կարողանայ ծածկել իր պարտքերը, մի և նոյն ժամանակ մի համեստ գումար էլ ձեռք բերէ ունենալ, իր բազմաթիւ ցանքերին ու դարձրին դարման տալու համար: Եւ իրաւ, վերջին երկու ամիսներում, Նախիջևան քաղաքը մի արտասովոր կենդանութիւն էր ստացել բամբակի աւաւոր շնորհով: Հրապարակել ամին օր լի է լինում ամեն տեսակ բամբակներով, որոնք մինչև երկու բրօշուր էլ վաճառվում են: Ամենից թանկ գինով ծախվում է «Մօրօզով» և ընկ-» բամբակը, այն է 8 բուրլով: Այն ինչ տեղային «Ղարա-բոզան» կոչված վաճառվում է 6 բուրլով: Գիւղացին աշխատում է ձիւն բերել գլխաւորապէս «Մօրօզով» բամբակի սերմը: Մեր երկրաշրջանը այն աստիճան շահաւէտ է գտնում այժմ բամբակի մշակութիւնը,

զրաւում իմ ուշադրութիւնը. նրանց գեղեցիկութիւնն ու փայլը նսեմացել են մայր մտնող արեւի գալիս առաջ: Ամենայն ինչ խաւար է թուում:

Ահա հրեղէն լուսատուն մօտեցաւ ապաւանդի մի անկիւնին, շիկացրեց նրան, այրեց, ոչնչացրեց և թաղանցեալ նրա քամակում: Ապաւանդը մեղմացել ու սե գոյներով նկարվեց աչք չը լացնող ոսկեգոծ երկնքի վրայ, երկայն ստուեր արձակելով դէպի ինձ:

Ինձ հետաքրքրում է մօռլ հսկան, ուստի սպասում եմ արևի բոլորովին անյայտանալուն: Երկնքը աստիճանաբար մըմնում է, բոլոր բարձրաւանդակները զրկվում են ծիւրների զգեստից, ամպերը ծանրանում են և կորցնում են իրանց թափանցիկութիւնը: Նրանց մէջ տարածվում են գունատ, իրար նման երկայն ճառագայթներ, յետոյ նրանք սկսում են փոքր առ փոքր թուլանալ... դարձեալ մի րօպէ և նրանք այլ ևս չեն կան:

Ստուերները նոյնպէս անյայտացան, սիւրւետը

որ շատ տեղ բանդել է այգիները, վարում է արօտատեղերը, որպէս զի բամբակ ցանէ. նա լըցնելով աղբը դաշտերում, սկսում է պարարտացնել հողը, մի դործողութիւն, որը շատ հաւանական էր երեկոյն էր համարվում առաջ: Գոթաղաւարտ մեր կողմերում զգացվում է ջրի պակասութիւն, եթէ ոչ Նախիջևանը կարող էր բամբակի հայրենիք համարվել: Ցաւելով պէտք է յիշենք այստեղ մի շատ տղիք երեկոյնի մասին, այն է հիւղացու կրած նեղութիւնների և հարստահարութիւնների մասին քաղաքացիների կողմից: Երբ միամիտ երկրագործը դալիս է քաղաք, իր բամբակը ծախելու համար, նա շատ անգամ ենթարկվում է այլ և այլ զրկանքներին քաղաքային կշեռքի վարիչների կողմից և շատ անգամ էլ զրկվում է իր բերած ապրանքի մի մասից: Սակայն ինչ կարող է անել միամիտ և անպատրաստ հիւղացին հակադրող, ճարպիկ և հարստահարող քաղաքացու դէմ:

ԱՐԻՍՏԱՆԻՑ մեզ գրում են. «Այստեղի հայ կաթողիկոսների դպրոցը նախանձելի դրութեան մէջ չէ: Նա գտնվում է մի փոս տան մէջ, որը գետնի մակերեսից 3—4 արշին ցածր է, իսկ ձիւնը անտեղից խոնավ ու խեղդիչ օդ կարող է ունենալ այդպիսի մի շնութիւն, այնպիսի մի ցուրտ երկրում, ինչպիսին է Արշահանը, թող ընթերցողը դատէ: Սենեակի մի մասը ծառայում է ուսուցչին իբրև ննջարան, իսկ միւս մասում դրած են երկու երկայն, անկանոն ու հնազարեան նստարաններ: Զը կայ ոչ ուղտն, ոչ զրատակատակ, ոչ համբիշ—մի խօսքով դուրս է դպրոցական բոլոր անհրաժեշտ պիտուքներից: Աշակերտները հաճնված են կեղտոտ, երեսները անլուայ: Աշակերտները բերում են տեսակ տեսակ թէ հայերէն և թէ ռուսերէն գրքեր, իսկ ուսուցիչը մի երկայն ճիւղած ձեռքն առած՝ իբրև թէ դաս է աւանդում: Այդ դպրոցը իր կազմակերպութեամբ հին խալիֆայական դպրոցից մի բան էլ անցել է: Իսկ մանուկները անօգուտ վատնում են իրանց անդաւունքի ուսկի ժամերը: Եւ ի՞նչ է մեղաւորը,—նոյնը, որոնք մի րօպէ անգամ չեն հետաքրքրվել իմանալով՝ թէ ինչ վատ ազդեցութիւն է գործում այդ տեսակ դպրոցը իրանց որդոց նոյն իսկ առողջութեան վրայ, կամ թէ ինչ են սովորում նրանք»:

ԲԱՆԱՆԻՑ հիւղից մեզ գրում են. «Այս տարի, ինչպէս արտերը, նոյնպէս էլ այգիները կարկուտահար եղան. հիւղացիները, առանց բացառութեան, բոլորն էլ ստիպված են ցորեն առնելու: Գիւղացիները, վարուցանքը չէին աւարտել, որ անպատեկ կերպով ձիւն եկաւ և ամենքն էլ գոթանալով յետ դարձրին իրանց տները: Ամեն մարդ պէտք է իւրաքանչիւր տարի մի ուրիշ հող վարի, որովհետև ամեն տարի սովորութիւն կայ հողերը նորից բամբակ իրանց մէջ, որով, շատերի կարծիքով շատ յետաձգվում են վարելը. ոչ ոք չէ իմանում թէ որն է իր հողը, որպէս զի իր ժամանակին վարի: Գիւղը ձիւնով պատած է, և ջրաղացները դադարել են բանելուց, իսկ հիւղացիներին շատերի ոչ ձմեռվայ պաշարն է աղացած և ոչ էլ ցորեն ունեն առած. ցորենը ծախվում է 1 ր. 30 կոպէկից մինչև 1 ր. 50 կ.:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են դեկտեմբերի 15-ից հետեւեալը: «Ամիս 13-ին, գիշերը, մի քանի

պարզվեց, դաշտը կարծես հանգստութիւն ստացաւ, թեթեւ գիւղերը փնց և արտերի մէջ քնքշալ շարժում տիրեց. նրանք արձակեցին մի անործելի սկսվեց:

Ահա արդէն երեսցին թամար թաղուհու ամրոցի աւերակները: Բազմադարեան ապաւանդը իր անմաշկելի գագաթի վրա սրբութեամբ պահում է մինչև այսօր այդ աւերակի մնացորդները: Նրանք իրանք բարձրութիւնից ահալկու դէմքով դիտում են չորս կողմ և ոչ մի արարած չէ յանդգնում վրդովել նրանց հանգստութիւնը: Այդ հրական իր կրթից անթիւ ժայռեր է պոկել ու դըլրել դաշտի չորս կողմը, մահ տարածելով անտառի և բուսականութեան մէջ: Այնտեղ, մի անկիւնում, բեկորներն ու մնացորդներ խառնուրդի միջից բլրում է փղերիկ աղբիւր, որ չունենալով կանոնաւոր ճանապարհ, տարածել է իր անշան ձիւնը: Բարձրում ամեն կողմ:

Ապաւանդը իր մէջ հարկաւորաւոր ձեղքեր է բացել, որոնցից դուրս են ցայտել հազարաւոր ծա-

թուրքեր փայտնում են ձիւրաէլի միջոցով 28 բեռ անմաքու ապրանք և Շուշին են բերում այդ ապրանքը: Կողակները այդ իմանալով, անմիջապէս թուրքերի ետեից են ընկնում և հասնելով Շուշի՝ չը կարողանում են թուրքաց թաղի բազարի բոլոր խանութները: Երեկ սկսվել է խանութների խուղարկութիւնը և բաւական թուով անմաքու ապրանք է բռնվել: Ինչպէս երևում է անմաքու ապրանք բաւական շատ կայ այդ խանութներ: Թուրքերի բազարում այս րօպէիս առետուր չը կայ, քանի որ այդ բազարի բոլոր խանութները փակված են:

Մեզ գրում են ՇՈՒՇՈՒՑ, որ այդ քաղաքում էլ, թիֆլիսի պէս, վերջին օրերս պատահել են յանկարծակի մահվան 3 թէ 4 դէպքեր:

Մեզ գրում են ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ հետեւեալը: «Դեկտեմբերի 11-ին քաղաքի հասարակութիւնը զաւառական վարչութեան առեւանգում կատարեց զեպոտատական ընտրութիւն եկող տարւոյ համար: Փութաբլութեամբ ընտրվեցան՝ պ. պ. Եսայի Խոյսեան և Գեորգ Ղաւապեան զեպոտատական պաշտօնի համար, իսկ պ. պ. Ն. Այտինեան և Յ. Սահապեան նրանց օգնացուցիչ: Հասարակութիւնը մեծ յոյս ունի նորընտիր քաղաքային զեպոտատների պաշտօնավարութեան վրայ»:

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ մեզ գրում են, որ դեկտեմբերի 9-ին այդտեղի հայ-կաթողիկ հասարակութիւնը, հայ-կաթողիկները նորընտիր վիճակային կառավարիչ Պօղոս վարդապետ Նահապետեանի նախագահութեամբ ժողով կայացնելով, ընտրեց 4 անձանց, որոնք պարտաւոր են, իրան կառավարչի հետ միասին, աշխատել բարեգործիչ հայ-կաթողիկ եկեղեցին և միջոցներ որոնել ապահովելու եկեղեցու նիւթական վիճակը: Հասարակութիւնը վճռեց վարձել ձայնագրութեան մի ուսուցիչ, երեքցիկ աշակերտներին կանոնաւոր երեքցողութեան դասերն աւանդելու և նմանապէս հողա՝ եկեղեցում օրինաւոր և վայելուչ սպասարկութիւնը իրագործելու համար: Թղթակցին աւելացնում է, որ նորընտիր վիճակային կառավարչի, առհասարակ, մեծ ջանք է գործ դնում բարեկարգելու եկեղեցին:

Ցրտերը թիֆլիսի շարունակում են սաստիկ լինել: Արդէն մի քանի օր է փողոցներում սահնակներով են շրջում: Առաւօտները ցուրտը հասնում է 14 աստիճանի, կէսօրին եղանակը փոքր ինչ տաքանում է և ջերմաչափը բարձրանում է մինչև 9 կամ 8 աստիճան ցրտի:

Շարաթ օր, դեկտեմբերի 17-ին, թիֆլիսի Արտիստական ընկերութեան դահլիճում մի ներկայացում-կոնցերտ տրվեց յօղաւ թիֆլիսում հիմնված «Ժողովրդական դրադարանի» և երկու «կերակայ» դպրոցների Ուրախալի էր, որ այդ համակրելի հիմնարկութիւններին նպաստելու համար, հասարակութիւնը շտապել էր լցնել դահլիճը, և այդպիսով ներկայացման արդիւնքը բաւական աջող պէտք է համարել:

Պետերբուրգի գիտութիւնների ճեմարանի կար-

ուեր ու թիֆլիսի, զրկախառնվելով իրար հետ, ծնունդն էր զրկախառնվելով Բայց գագաթը չէ ծնւլված, դա ազատ է ամեն բանից, դա ինձ թուում է մի գերբնական ոյժ, որի առաջ փայլակը և կայծակն անգամ անգոր են:

Նա արդէն սկսում է ընկղմվել խաւարի մէջ, ծածկվում է անթափանցելի քողով: Բուսականութիւնը սնանում է, երկնքը սառն, մոլոր կապոյտ գոյն է ընդունում, աստղերը մէկը միւսի յետեից յայտնվում են ու թոյլ կերպով փայլում: Հողմը աւելանում է, սայլի ճանապարհից թեթեւ փոշի է բարձրանում, դաշտի միջից բուսականութեան հոտ է բուրում և ապաւանդը թամար թաղուհու ամրոցի հետ սեւ, տափակ սիւրէտի է փոխվում:

Վաղը դեռ արեւ չը ծագած կը գծագրւմ ալբոմիս մէջ այսօրվայ բոլոր տեսածս մտածեցի ես ու վերադարձայ տուն, ուր ընկերս սպասում էր ինձ:

Գ. Բաշինջաղեան

գաղութիւններ և նրա ծախսով արդէն տպագրուեց «Материалы для изучения периодических напечатанных» վերնագրով աշխատութեան առաջին մասը: Այդ աշխատութեան հեղինակն է Վ. Ժուկովսկին, որը ժողովրդական լուսաւորութեան միջնորդութեան յանձնարարութեամբ Պարսկաստան գնալով, այնտեղ էլ ուսումնասիրել է պարսկական բարբառները հարցը:

Թիֆլիսում ծաղիկ հիւանդութիւնը թուլացաւ, այժմ սկսել է տարածվել հրուշակէջ (սկարլատինա) կոչված հիւանդութիւնը երեխաների մէջ: Քուրէշը արդէն դոնէր է տանում երեխաներից: Պատահում է, որ մի ընտանիք մի քանի օրվայ ընթացքում զրկվում է երկու երեխաներից: Մի քանի բժիշկների մեղ հասցրած տեղեկութիւնները երևում է, որ քուրէշը կարող է շատ դոնէր տանել, եթէ նախապաշտպանողական խիստ միջոցներ գործ չը զրկեն:

Լսում ենք, որ ամսին 26-ին Թիֆլիսի ժողովարանում պէտք է լինի պարահանդէս վիճակաւ լազի հետ միասին յօգուտ Հայոց Բարեգործական ընկերութեան:

Մեղ ուղարկված է Եւսեպիւրի «Զուր տեղը մեծ ազմով» հինգ գործողութիւնից բաղկացած կատակերգութեան թարգմանութիւնը: Այդ կատակերգութիւնը գերմաներէնից թարգմանել է պ. Յովհաննէս Լալայեան: Թերթիւով այդ թարգմանութիւնը այն եզրակացութեան եկանք, որ պ. Լալայեանի թարգմանական լեզուն պահպանել է մի տեսակ ինքնուրոյնութիւն, և բաւական մշակված է, թէ նրա մէջ շատ են պատահում գրաբար դարձածներ և վերջապէս թիւններ: Գիրքը, որ վաճարվում է Կենտրոնական գրավաճառանոցում, արժէ 50 կ: Ցանկալի է, որ Եւսեպիւրի լեզուն երբեք մեր թարգմանիչները չարժանաւորեն թարգմանել եւրոպական այնպիսի նշանաւոր հեղինակների գրածները, ինչպիսին է Եւսեպիւրը:

Ստացանք բազում անգամ պ. Գրիգոր Լալայեանից 10 ռուբլի, որպէս զի այդ փողով ուղարկենք «Մշակի» տարեկան օրինակը իր կողմից նուէր փոխարձակ պ. Մարտիրոս Գարակիզեանին:

Թիֆլիսում «Մշակին» բաժանորդ գրվել ցանկացողները՝ բացի խմբագրատնից, կարող են գրվել նախապես և Միտի երեքշաբթի մօտ գտնվող պ. Մկրտչա Տէր-Գրիգորեանի խանութում, և Գ. Օրվինսկի խորտակալի վրա գտնվող եղբ. Խուզա-վէրդեանների «Վիեննայի վաճառատանը»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՆԱՄԱՅԻ ՋՐԱՆՑԳԻ ՀԱՐՅԸ

Եւրոպական ամբողջ հասարակութեան ուշադրութիւնը ներկայացումն գրաւել է Պանամայի ջրանցքի հարցը:

Պանամայի ջրանցքը շինելու համար կազմված ընկերութիւնը միջոցներ չունի շարունակելու ջրանցքի շինութիւնը, և ահա հէնց այդ պատճառով գործը կէտումն է մնացել, և ահա ահագին և օգտաւէտ ձեռնարկութեան աջողութիւնը կառավարի է ներթափանցում:

Լեւսեպիւր Պանամայի ջրանցքի շինութեան այդ տաղանդաւոր նախաձեռնողը՝ այժմ վշտացած սրտով տեսնում է, թէ ինչպէս ամբողջ Եւրոպան տատանվում է նիւթապէս օգնելու այն գործին, որի աջողութիւնը շահաւէտ կը լինի ոչ թէ միայն Պանամայի, այլ և ամբողջ աշխարհին համար: Արտւում ենք ամբողջ աշխարհի համար, որովհետև յիշուի, որ Պանամայի ջրանցքը միջազգային նշանակութիւն ունի, ինչպէս որ միջազգային նշանակութիւն ունեցաւ Սոէզի ջրանցքը: Տարանջատոր Փրանսիացի ստեղծեց Սոէզի ջրանցքը շինելու նախագիծը, այդ ջրանցքը շինվեցաւ, և զրանից օգտվում է ամբողջ աշխարհը: Նոյն տաղանդաւոր Փրանսիացին ստեղծել է մի նոր և վիթխարի ջրանցք կառուցանելու նախագիծը, այն է Պանամայի ջրանցքի նախագիծը, որով պէտք է միանան Ատլանտեան և Խաղաղ օվկիանոսները, և երբ այդ ջրանցքը կը կառուցանվի, նա մեծ ազդեցութիւն կունենայ ամբողջ աշխարհի առևտրական և կուլտուրական յարաբերութիւնների վրա:

Բայց այժմ ջրանցքի շինութիւնը կիսատ է մնում. նրա մեծ մասը շինված է, և ահա այժմ, երբ Պանամայի ընկերութեան անդամները և նրանց հետ եւրոպական հասարակութիւնը սպասում էին, որ շուտով երկու մեծ օվկիանոսների ալիքները միմեանց հետ կը գրկախառնվին, յանկարծ յայտնվում է, որ ընկերութիւնը այլ ևս միջոցներ չունի իր գործը շարունակելու համար:

Պանամայի ջրանցքի շինութեան օգտակարութիւնը դեռ շատ տարի առաջ խոստովանում էր ամբողջ Եւրոպան. բայց երբ հարցը եկաւ փողին, միայն մի խումբ մասնաւոր մարդիկ հանդէս եկան, գործին անմիջապէս մասնակցելու համար: Մասնաւոր անձինք, հաւատալով Լեւսեպիւրի տաղանդին և նախաձեռնութեանը, կազմեցին ակցիոններական դրամագումար, կազմվեցաւ Պանամայի ընկերութիւնը, որը և սկսեց բաց թողնել օրիգրաֆները: Արդէն վեցերորդ անգամ փոխառութիւն կաւա: Բայց և այնպէս այդ բոլորը բաւական չէր ջրանցքի շինութիւնը աւարտելու համար: Նորեքս պատրաստվեցան եօթերորդ փոխառութիւն անելու, և մտադրութիւն կար միլիոնից աւելի օրիգրաֆները բաց թողնել: Բոլոր փոխութիւնը կապացած կը լինէր, եթէ հասարակութիւնը զնէր մինչև 400 հազար օրիգրաֆ:

Բայց հէնց այդտեղ գործը ընդհատվեց. հասարակութիւնը զնէր միայն մինչև 25,000 օրիգրաֆ, բոլորն չը մասնակցեց այդ գործին, և այդ պատճառով կարող միանգամայն սկսեց ընկնել: Խոյզ դրա հետեանքը այն եղաւ, որ փոխառութիւնը ընդհատվեց, և դրա հետ միասին թէ ակցիոնները ընկնել և թէ առաջ բաց թողած օրիգրաֆները զնէր պակասեցին: Խոյզ այդ բոլորի հետեանքը այն եղաւ, որ Պանամայի ընկերութիւնը 800 միլիոն ֆրանկից աւելի վնաս կրեց: Մեծ վնաս...

Ահա այդ դրութեան մէջ է գործը: Գրամատեքները չեն կամենում ձեռք մեկնել ընկերութեանը: Ակցիոնները յուսահատվեցին, որովհետև նրանցից շատերը իրանց վերջին կօպէլը կը կորցնեն, եթէ ընկերութիւնը անանկ կը յայտնվի, իսկ Փրանսիական կառավարութիւնը, նոյն իսկ պատգամաւորների ժողովը մերժեց օգնել ընկերութեանը:

Այդ պատճառով շատերը մեղադրում են Ֆրանսիական պատգամաւորների ժողովին, որ նա չէ կամենում օգնել այդ գործին գլուխ դառնալ: Ֆրանսիական կառավարութիւնը շատ է աշխատում այդ գործին մի կերպ օգնելու, բայց յարմար միջոցներ չը կան: Ինքն կառավարութիւնը երկու կրակի մէջ է դրված. չէ իմանում ինչ անել: Ոչինչ ընկերութեանը զանձաբանի փողով դժուար է, որովհետև նա անյարմար է համարում պետական հարկերից զրոյացած գումարներով ծածկել մի ընկերութեան վնասները, և այն էլ մի այնպիսի ձեռնարկութեան համար, որը միջազգային նշանակութիւն ունի, որին պէտք է օգնել իսկպէս բոլոր պետութիւնները, մասնաւորապէս նոյն պատգամաւորների ժողովը լաւ դիտէ, որ այս ընկերութեան մասնակցանալը ջրանցքի գործը կիսատ չի մնայ: Եթէ այս ընկերութիւնը իրան սնանկ յայտնեց, Լեւսեպիւր կը դիմէ ուրիշ գրամատեքներին, նրանք ածուրբով կառնեն ջրանցքը, ի հարկէ շատ ձեռնառու պայմաններով և ջրանցքը կաւարտեն: Իրանք վերցնելով ամբողջ օգուտը:

Բայց բանը նրանումն է, որ այժմեան ընկերութեան շատ անդամները իրանց վերջին կօպէլից կը գրկվեն, եթէ ընկերութիւնը իրան սնանկ կը յայտնի: Եւ ահա հէնց այդ տեսակ բազմութիւն և յուսահատ դրութեան մէջ գտնվող անդամներին օգնելու համար է աշխատում այժմ Ֆրանսիական կառավարութիւնը՝ ձգտելով մի կերպ կարգի բերել Պանամայի ընկերութեան գործերը:

Պարծառք կը լինէր Ֆրանսիային համար, եթէ Ֆրանսիական դրամատեքները կառավարութեան հետ միասին օգնէին Պանամայի ընկերութեանը՝ աւարտելու Պանամայի ջրանցքը, և այդպիսով տային ամբողջ աշխարհին մի այնպիսի գործ, որի համար ամբողջ մարդկութիւնը պատկառանքով կը յիշէ Ֆրանսիայի անունը և արածները:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզում լուրեր են պտտում, որ իբրեւ թէ կառավարութիւնը մտադիր է խիստ միջոցներ ձեռք առնել Բուլանժէի և նրա կողմնակիցների

դէմ յեմէ կառավարութիւնը ձեռք առնի այդ տեսակ խիստ միջոցներ, այդ կը նշանակէ որ Բուլանժէի կառավարութիւնը նորից ոյժ է ձեռք բերել: Բայց ոչինչ այնպիսի հաստատ չիմը չը կայ կարծելու, որ Բուլանժէ աւելի ոյժ և դիրք է ձեռք բերում:

«R publique Fran aise» լրագիրը պնդում է, որ անհրաժեշտ է փոխել Օմարեան դքսին Ֆրանսիայից արտաքսելու մասին եղած կարգադրութիւնը:

Լուր կայ, որ սերբիական նշանաւոր գործիչ Գարաշանին նշանակված է Փարիզի սերբիական դեսպան:

Լոնդոնից եկած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ Անգլիայի գործերը վերջին օրերում աջող են գնում Աֆրիկայում:

Բէլգրադից հեռագրում են, որ Միլան թագաւորը այս օրերս այցելութիւններ անելով արմատական մի քանի նշանաւոր գործիչներին, նրանց հետ համերաշխութիւն էր ուղում հաստատել երկրի քաղաքական-տնտեսական գործերի վերաբերմամբ:

Սֆիւրայից հեռագրում են, որ Ստամբուլի գործը դրած արտասովոր խտտութիւնների և ճնշչունների պատճառով նրա կողմնակիցներից մի քանին էլ դժգոհ են նրա ընթացքից: Այդ հասկանալի է, քանի որ քաղաքականութեան մէջ ճնշումը համակրելի չէ կարող լինել, ինչ կուտակցութեան և ինչ մարդու ձեռքով էլ գործադրվի նա:

Վիեննայում կարծում են, որ Բուլգարիայի միջնորդութեան ճգնաժամը անխուսափելի է:

Արմատական կուսակցութիւնը պահանջում է որ Սերբիայում մոցնվի ընդհանուր ձայնաւորութիւնը:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Նիւ-Եորկի երեկի մի բուսաբան բազմավիւ փորձեր անելով գտել է, որ հեռագրական և հեռախօսական թելերի վրա բուսում են բազմաթիւ մանր բույսեր և այդ բույսերի սերմերը այդտեղ բերողները լինում են բացառապէս թուստներ:

Պիկագոյում նորեքս կազմակերպվել է մի ընկերութիւն, որի նպատակն է ամառ ժամանակը հոկտեմբեր թէ հասարակական հիմնարկութիւնները և թէ մասնաւոր տները: Այդ նպատակով ընկերութիւնը թոյլտուութիւն է խնդրում ուղղակի փողոցներից տների մէջ անցկացնել խողովակներ, որոնցով կարելի լինի տների ներսը փչել հոկտեմբեր քաղաքային ունեցող օդ: Խոյզ օդը հոկտեմբեր համար ընկերութիւնը գտել է զանազան բազադրութիւններ:

Այս օրերս Փարիզի բուլվարների վրա վաճառվում էին մի ծիծաղելի խաղալիք, այդ խաղալիքը ներկայացնում էր Ֆլօկլին, պահապանի նշանագրեւորով, որի օձիքի վրա գրած է «X 13, X քաղաքաբաժին»: Ֆլօկլին ունի մօտ դրած է Ֆլօկլին աւանդական մեծ գլխարկը, ձեռքին նա բռնած ունի մի մեծ ձեռնափայտ, որը շարժելիս, ամեն անգամ, մի մեքենայի շնորհով, իսկույն գլխարկից դուրս էր պրծնում Բուլանժէն: Այդ ծիծաղելի խաղալիքը մեծ քանակութեամբ գնում էին փարիզեցիները, որոնք հէնց մի պատճառ են որոնում ծիծաղելու համար: Բայց այդ երկար չը տևեց, որովհետև ներքին գործերի միջնորդի կարգադրութեամբ այդ խաղալիքի վաճառքը արգելվեց:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍՄԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՑ

ՊԵՏԵՐՈՒԳ, 17 դեկտեմբերի: Հրատարակված է հրամանադիր, որ զինուորական և ծովային օֆիցերների արքունութեան իրաւունքը՝ երկաթուղիներով ճանապարհորդելու վերաբերութեամբ, տարածվում է նոյնպէս և զինուորական և ծովային և վարչութիւնների իսկական ծառայողների մէջ գտնվող զինուորական բժիշկներին վրա: Այդ իրաւունքից օգտվել կը սկսվի այն օրից, երբ այդ մասին կը յայտարարվի օրինական կարգով:

ՊԵՏԵՐՈՒԳ, 18 դեկտեմբերի: «Новое Время» լրագիրը լսել է, որ Ֆինանսների միջնորդը հրամանագրել է, որ 1889 թվին անցադիր չը տրվի օտարերկրայ նաւերին ծովայինայ (կաթոսած) նաւազնացութեան համար. նա այդ իրաւունքը համարում է բացառապէս ռուսապատանների սեփականութիւնը:

ԲԵԼԳՐԱԳ, 18 դեկտեմբերի: Այսօր բացվեց մեծ սկուպչինան: Նախագահ ընտրվեց Տաւմա-կովիչ: Սահմանադրութեան նախագիծը տրվեց

սկուպչինայի առանձին յանձնաժողովի ընտնութեանը:

ՓԱՐԻԶ, 18 դեկտեմբերի: Պատգամաւորների ժողովի և սենատի նախաշնորհ փակվեց: Ֆլօկլին դրութիւնը ընդհանրապէս ամուր է համարվում:

ՊԵՏԵՐՈՒԳ, 18 դեկտեմբերի: Ջինուորական վարչութեան տուած հրամանի համեմատ, Կիէվի և Վիենայի զինուորաշրջանական վարչութիւնների շտաբներում մտցրած է չըջանի զօրքերի հրամանատարի օգնականի պաշտօն զենեայ-լէտը-նանտի աստիճանով. կարող է լինել և դեռերայ:

ԹԷԼԷՐԱՆ, 19 դեկտեմբերի: Հրատարակված է պարսկական լրացուցիչ յայտարարութիւն: Զօրուն գետի վրա նաւազնացութեան մասին: Օտարերկրայ նաւերին թոյլ է տրվում կանգնել Ալալադում այնքան ժամանակ, որքան ժամանակ կը պահանջվի նաւերը բեռնելու և դատարկելու համար: չողքնաւոր վճարում են 7 պէսն մաքսահարկ տօնից, առադատաւոր նաւերը վճարում են երկու անգամ պակաս:

ՏԱՐԱԳՕՆԱ, 19 դեկտեմբերի: Դինամիտային երեսուն փամիւռայնների պայթուցիկ երկու տուն քանդվեց, որի ժամանակ մի քանի մարդիկ ըսպանվեցան և վիրաւորվեցան:

Ս. ՊԵՏԵՐՈՒԳԻ ԲՈՐՍԱ

Դեկտեմբերի 16-ին			
Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէ.	96	7	40
Համբուրգի վրա 100 մարկ	47	15	
Փարիզի վրա 100 ֆրանկ	37	85	
Ոսկի արծէ	7	72	
Մաքսային կուպոններ	154	50	
Արծաթ	1	16	
Բօրսային դիսկոնտներ	67/8	73/4	0/0
Պետակ. բանկ. 5% տոս 1-ին շրջանի	99		
— — — — — 2-րդ	97		
— — — — — 3-րդ	97		
— — — — — 4-րդ	97		
— — — — — 5-րդ	97		
— — — — — 6-րդ	97		
Նոր 4% փոխառութիւն.	140		50
Արեւելեան 5% փոխառութիւն. 1-ին շրջ.	97		87
— — — — — 2-րդ	98		12
— — — — — 3-րդ	97		62
Ներքին 5% առաջին փոխառութիւն.	270		50
— — — — — երկրորդ	244		62
5 1/2% բէնտա	102		
Ոսկեայ բէնտա	175		
Եթերի կոնսօլիդացած փոխառութիւն.	149		
Նոր երկաթուղային բէնտա	98		
5% գրաւական թղթեր կալուած.	—		
— — — — — փոխ. կրեք. ընկ. միտ.	—		
— — — — — Թղթադ.	91		25
Գրաւ. թղ. Ազն. բանկի	98		
5 1/2% գրաւական թղթեր Խեբուսի	97		12
6% գրաւակ. թղ. Խաղալիք կալ. բան.	100		50
— — — — — Պետալայի	100		50
— — — — — Պետ. Տուրակ.	99		75
— — — — — Կիէվի	101		50
— — — — — Մօսկովայի	101		25
— — — — — Բեսարաբ. Տալի.	99		75
— — — — — Նիժ. Սամար.	100		
— — — — — Վիենայի	99		25
— — — — — Թիֆլիսի—72	—		—
— — — — — Բուլգարիայի—18	—		—

Վ. օլժակ-Կամակի բանկի ակցիոնները 670 > — >
Խուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ. 240 > — >
Իրիւնսկ-Բօլոգոյի ընկ. 85 > 75 >
Ս. Պետերբուրգի քաղաքային օրիգրաֆներ. 92 > — >
Մօսկովայի քաղաք. օրիգրաֆներ. 91 > 75 >
Օղէսայի — — — — — 92 > 62 >
Թիֆլիսի քաղաք. կրեք. ընկ. օրի. — > — >
Ս. Պետերբուրգի քաղաքի տրամադրութիւնը շատ ամուր է:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

ԲԱՅՈՒՆ. Ս. Ուղարկեցինք ձեզ «Մշակի» համարները № 36-ից սկսած:

ԱՍԱԼՅԱՆ. Յ. Խ. Գր. Արժուտու բրոշուրը «Экон. Пол. Труды. Арм.» վերնագրով ուղարկված է ձեզ:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄՈՒՆԻ

3-3